

## Տ. ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ ԲՈՋԻԿՅԱՆ
(ավազանի անունը՝ Բաբկեն)

Ծնվել է 1977 թ. Գավառ քաղաքում:

1983-1994 թթ. սովորել է տեղի № 1 միջնակարգ դպրոցում:

1994 թվականին ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

1999 թ. տեղափոխվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան՝ այն ավարտելով 2000 թ.:

1998 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի, Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ:

2000 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է նշանակվել Վեհարանում՝ որպես գործավար-քարտուղար:

2001 թ. հուլիսի 15-ից մինչև դեկտեմբերի 1-ը ծառայության է անցել Մայր Աթոռի Սոցիալական ծառայության բաժնում՝ որպես գործավար-քարտուղար:

2000-2001 թթ. հետևել է Հայաստանի Ամերիկյան համալսարանում կազմակերպված մենեջմենթի դասընթացներին:

2001 թվականի սեպտեմբերից մինչև դեկտեմբեր սովորել է Շվեյցարիայի Բոսսեի Էկումենիկ ինստիտուտում:

2002 թվականի փետրվարի 1-ից հոգևոր ծառայության է անցել Արմավիրի մոտոհրաձգային ուսումնական բրիգադում:

2002 թվականի հուլիսի 10-ին պաշտպանել է «Մխիթար Սասնեցու աստվածաբանական ճառերը» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

Նույն թվականի սեպտեմբերի 1-ին՝ Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: